

ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ՀԱՅԵՐԵՆԻ ԿՐԱՎՈՐԱԿԱՆ ԱՇԱՆՑՄԱՆ ՉԵՆՔԱԿՎՐՈՒ
ՆԵՐԳՈՐԾԱԿԱՆ ՍԵՌԻ ԲԱՅԵՐԸ

Շ.Մ.Մինասյան

Բառերի քերականական այն կարգերը, որոնք անսիջականորեն առնչվում են նրանց բառմաստին, առավել հակված են փոփոխությունների, որոնք էլ հանգեցնում են ընդհանուր օրինաչափություններից շեղումների: Քերականական այդպիսի կարգերից է բայասմբը: Մեծը բայի ամենաբնորոշ քերականական կարգերից է, որի վերաբերյալ առայսօր էլ տարակարծությունները շատ են: Մեր խնդիրը չիսմարելով այդ տնտանիքների քննությունը՝ կոսմենք ներգերծական սեռի բայերի մի կարևոր առանձնահատկության մասին:

Մեծի քերականական կարգը քննելիս բոլոր լեզվաբանները անգրադառնում են նախևառաջ անցողականության և անանցողականության հասկացություններին, ընդ որում անցողականությունը բնորոշում են ուղղական (հայցական) հոլովով արտահայտվող ուղիղ խնդիր պահանջելու և ընդունելու հատկությամբ, իսկ անանցողականությունը՝ նշված հատկության բացակայությամբ:

Որպես անցողական գործողություն ցույց տվող բայեր՝ ներգործական սեռի բայերը բնորոշվում են երկու սեռատարբերակիչ առանձնահատկությամբ.

1) նրանք արտահայտում են այնպիսի գործողություն, որի կատարման համար պահանջվում է մեկ այլ առարկա, որն էլ քերականորեն ներկայանում է որպես ուղիղ խնդիր,

2) որոշ բացառությամբ ստանում են *-յ* ածանց և փոխում իրենց սեռային նշանակությունը:

Նշված երկու հատկությամբ բնորոշվում են ներգործական սեռի բայերի մեծագույն մասը, սակայն մի շարք բայեր շեղվում են ընդհանուր օրինաչափությունից. նրանք կրավորական ածանց չեն ստանում կամ նրանց կրավորականը գործածական չէ:

Նշված առանձնահատկությունը հանդես են բերում կազմությամբ թե՛ համադրական, թե՛ հարադրական բայեր:

Համադրական մի շարք բայերի կրավորական ածանցման չնթարկվելու հանգամանքը չի վրիպել բայի սեռը ուսումնասիրող լեզվաբանների կողմից:

Ա. Մուրվալյանը, խոսելով ներգործական սեռի բայերի մասին, գրում է. «...կան որոշ անցողական բայեր, որոնք չունեն իրենց հակադիր՝ կրավորական ձևերը (կամ դրանք սովորական, գործածական չեն): Դրանցից են, օրինակ *գիտենայ, ուզենայ*՝ կամ *ուզել, կամենայ, ցանկանայ, հուսայ* և այլն»¹: Ա. Աբրահամյանը նշում է, որ ներգործական սեռի բայերը, չնչին բացառությամբ, ի վիճակի են կրավորական ածանցման ընթարկվելու և իրենց սեռային նշանակությունը փոխելու²: Մ. Ասատրյանը ևս մեկ նախադասությամբ նշում է, որ սակավ բացառություններով յուրաքանչյուր ներգործական բայ ունի իր համապատասխան *-յ* ածանցով կրավորականը³: Ն. Պառնասյանը հարցին անդրադառնում է անուղղակիորեն.

«Ժամանակակից հայերենում ներգործական սեռի բայերի ճնշող մեծամասնությունը ունի *-յ* սեռածանց ընդունելու հատկություն»⁴: Վերջերս լույս տեսած Յու. Ավետիսյանի, Հ. Զարարյանի «*Հայոց լեզու: Ձևաբանություն*»⁵ գրքում հեղինակները որպես բացառություն ներկայացնում են ներգործական սեռի մի շարք բայեր՝ *ունեն, ունենայ, ուզել, ուզենայ, գիտեն, գիտենայ, սովորել*, որոնք *-յ* ածանց չեն ստանում և կրավորական չեն դառնում:

Բառարանային և տնքատային ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ այդպիսի բայերի քանակը զգալի է, երևույթի պատճառները տարբեր:

Կրավորական ածանցման չնթարկվող համադրական բայերը մենք բաժանել ենք երեք խմբի:

Առաջին խմբի մեջ մտնում են մի քանի պակասավոր բայեր, որոնք առհասարակ կրավորական դասնայա չեն կարող: Այդ բայերն են *գիտնմ, ուննմ, լվայ, ցանկայ, հուսալ, Գիտնմ* և *ուննմ* բայերը պատկանում են ակտիվ գործածություն ունեցող ներգործական սեռի բայերի շարքին և կարող են ընդունել իմաստային լայն ծավալ ընդգրկող ուղիղ խնդիր լրացում, մինչդեռ վերջին երեք բայերը քիչ գործածական են:

Երկրորդ խումբը կազմում են այն բայերը, որոնք իրենց հիմնական իմաստներով չեզոք սեռի են, բայց իմաստափոխությամբ կամ խնդրառական փոփոխություններով տեղաշարժի են ենթարկվել դեպի ներգործականը:

Հասկանալի է, որ գրաբարում միայն չեզոք, ժամանակակից հայերենում նախևառաջ չեզոք, ապա միայն ներգործական սեռի իմաստով հանդես եկող բայերը առավել ևս կրավորական ածանցման ենթարկվելու հատկություն հանդես չեն բերի: Այդ բայերից են *անցնել, բխել, խնջել, տննչալ, ունկնդրել* և այլն: Կրավորական ածանցման չենթարկվող մի քանի բայեր էլ թե՛ գրաբարում, թե՛ ժամանակակից հայերենում կրկնասեռ են՝ չեզոք և ներգործական սեռերի համատեղումով: Սրանց գրաբարյան սեռային և իմաստային հարաբերությունները հիմնականում պահպանվել են նաև ժամանակակից հայերենում: Այդ բայերից են՝ *աշխատել, ծաղկել, հոգալ, նրկարել, նրկնել, ցնկնել, շողնել, ողբալ, սովորել, սգալ, ստնլ* և այլն: Այս բայերը թե՛ գրաբարում, թե՛ ժամանակակից հայերենում իրենց առաջնային և իշխող իմաստներով չեզոք սեռի են, բացի *սովորել* և *ողբալ* բայերի, որոնցում այժմ իշխում է ներգործական սեռի իմաստը: Այս հանգամանքն էլ խոչընդոտում է նշված բայերի՝ կրավորական ածանց ստանալուն: Այս կապակցությամբ Ա. Աբրահամյանը գրում է, «... որոշ բայերի (չեզոք սեռի – Շ.Մ) մեջ էլ առաջացած ներգործական նշանակությունը անխափոք հնարավորություն չի տալիս բայը գործածել կրավորական սեռով: Դրանց մեջ սկզբնական չեզոք նշանակությունն այնքան ուժեղ է լինում, որ արգելք է առաջացնում բայի կրավորական սեռի արտահայտմանը»⁶:

Հիմնական չեզոք սեռի իմաստից իմաստափոխությամբ ու խնդրառական փոփոխություններով ներգործական սեռի իմաստ առաջացած բայեր էլ կան, որոնք կրավորական ածանց են ստանում, ինչպես՝ *ապրել-ապրվել, նայել-նայվել, շնչել-շնչվել, սպասել-սպասվել, հնչել-հնչվել* և այլն:

Գրողել և *դիմավորել* բայերը ուղիղ խնդիր են առել և ներգործական սեռի դարձել ռուսերենի ազդեցությամբ, ընդ որում նրկորոշը ստանում է *-վ-* ածանց, առաջինը՝ ոչ:

Ավելորդ չենք համարում նշել, որ այս բայերը կրավորական ածանց կարող են ստանալ միայն այն դեպքում, երբ հանդես են գալիս ներգործական սեռի իմաստով:

Ընդ որում այս բայերի՝ ներգործական սեռի իմաստով գործածությունը բավական ակտիվ է, որով էլ պայմանավորվում է նրանց կրավորական ածանցումը:

Որոշ կիրառություններում, սակայն, կրավորական ածանց ստացած չեզոք սեռի բայերը արտահայտում են ոչ թե՛ իրենց ունեցած ածանցյալ իմաստով ներգործականի կրավորականը, այլ մի տեսակ գործողության հնարավորություն կամ լինելիություն⁷, ինչպես նրանում է հետևյալ օրինակներում. «Այտուղ չի ապրվում», «Կինոնկարը չի նայվում», «Նդանակի պատճառով չի խաղաղգվում» և այլն:

Երրորդ խումբը կազմում են այն բայերը, որոնք բացառապես կամ իշխող իմաստով ներգործական սեռի են, բայց կրավորական չեն դասնում: Այս բայերը տեսականորեն հնարավորություն ունեն ստանալու *-վ-* ածանց և դառնալու կրավորական, սակայն խոշոր մասն կիրառությամբ հանդես չեն գալիս: Պատճառը ներգործական և կրավորական սեռերի ոչ հավասարաչափ կիրառությունն է: Սրանով պայմանավորված՝ կրավորական ածանց չեն ստանում ինչպես քիչ գործածական՝ *այգանել, ազապարել, ավելել, ռոզրել, պատրվակել, տնչրել, մատովակել, մեղապատել, բոթել, մուծել, թծել* և այլն, այնպես էլ գործածական մի շարք բայեր՝ *աղաչել, շնորհավորել, շտայել, վարել, ուզենալ, ուզել, վայելել, գիտնալ*:

Հաբաղի բայերը սեռային առումով ավելի բարդ պատկեր են ներկայացնում, քան համադրական բայերը: Հաբաղի բայերի սեռը չի նույնանում նրանց բայական բաղադրիչի սեռին, այլ որոշվում է հարադրի ու այդ քայական բաղադրիչի միացությունը կազմող բայական բաղադրյալի իմաստով⁸: Ինչպես նշում է Ալ. Մարգարյանը, ներգործական սեռի բայերը, հանդես գալով հարադրության մեջ, կարող են կազմել և՛ ներգործական բայեր, և՛

չեզոք: Իսկ չեզոք սեռի բայները, հարադրության մեջ հանդես գալով, կազմում են միայն չեզոք բայեր:

Որպես բացառություն՝ լեզվաբանը բերում է երկու բայ *գլխի ընկնել* և *ծրնտով գալ*, որոնք, չեզոք սեռի բայական բաղադրիչ ունենալով, ներգործական սեռի նշանակություն են արտահայտում⁹:

Ելնելով հարադիր բայերի ունեցած իմաստային առանձնահատկություններից՝ կարող ենք ասել, որ չեզոք սեռի բայ-բաղադրիչ, բայց ներգործական սեռի իմաստ ունեցող հարադիր բայերի քանակը շատ է: Ուզում ենք շեշտել, որ այդ բայերը ունեն դարձվածի արժեք: Դրանք կրնաներ կրավորական ածանցման, ինչպես նաև խնդրառական առանձնահատկությունների հետ կապված¹⁰: Հարադիր բայերի կրավորական դառնալու վերաբերյալ Ալ. Մարգարյանը գրում է. «Ինչպես ներգործական սեռի համադրական բայերից կազմվում են համապատասխան կրավորական սեռի բայեր, այնպես էլ կրավորական սեռի բայեր են կազմվում համապատասխան ներգործական սեռի հարադրավոր բայերից. համեմատենք գործածել - գործածվել, գործի դնել - գործի գրվել, շուռ տալ-շուռ տրվել, թույլ տալ-թույլ տրվել և այլն»¹¹:

Մակայն իրողությունը դադարում է միօրինակ լինելուց, երբ խոսքը վերաբերում է դարձվածի արժեք ունեցող հարադիր բայերին: Դրանք բաժանել ենք երկու խմբի.

1) չեզոք սեռի բայ-բաղադրիչ ունեցող ներգործական սեռի բայեր, որոնք կրավորական ածանցման չեն ենթարկվում, քանի որ գործնականորեն այդ հնարավորությունը չունեն,
2) ներգործական սեռի բայ-բաղադրիչ ունեցող ներգործական սեռի հարադիր բայեր, որոնք կրավորական ածանցման չեն ենթարկվում ու խնդրառության տեսակետից հանդես են բերում անմիօրինակաճություն:

Չեզոք սեռի բայ-բաղադրիչ ունեցող ներգործական սեռի բայերից են՝ *հետևից ընկնել* (հետապնդել), *աչքին երևալ* (1. հավանել, 2. նշանակություն, կարևորություն, արժեք ունենալ), *որոր(ը) գալ* (հավանել), *աչքին դիպչել* (նկատել), *բերանը գալ* (մի բան հիշել ու ասելու օգնություն ունենալ), *ծնորք ընկնել* (ծնորք բերել, ճարել, գտնել), *միտքն ընկնել* (հիշել, վերհիշել), *միտքը գալ* (հիշել,) *մտքից գնալ* (մոռանալ), *մտքից նյնել/ընկնել* (մոռանալ) և այլն:

Գնալած ամբողջական կապակցության՝ ներգործական սեռի իմաստ արտահայտելուն՝ այդ բայերը հանդես են բերում ներգործական սեռի քնորոշ հատկանիշներից ոչ մեկը. կրավորական չեն դառնում և ուղիղ խնդիր չեն ընդունում: Սա բացատրվում է չեզոք սեռի բայ-բաղադրիչի իմաստային և խնդրառական հատկանիշների պահպանմամբ: Այս բայերի մեջ առանձնանում են *գլխի ընկնել* և *ծրնտով գալ*՝ դարձվածները, որոնք կրավորական ածանցման չեն ենթարկվում, բայց ուղիղ խնդիր են ընդունում¹²:

Ներգործական սեռի բայ-բաղադրիչ ունեցող հարադիր բայերից որոշները ստանում են – *վ-* ածանց՝ *ծնորք բերել-ծնորք բերվել*, *աչքի անցկացնել-աչքի անցկացվել*, սակայն այս կարգի բայերի մեծ մասը կրավորական ածանցման չի ենթարկվում, որը բացատրվում է նրանց՝ որպես դարձվածի արժեք ունեցող լեզվական միավորների կայունությամբ: Բնորենք օրինակներ՝ *աչքը բռնել/աչքն առնել* (հավանել), *ականջը քաշել* (խրատել), *ականջը կտրել* (նշանել), *գլուխը տանել* (ձանձրացնել) և այլն: Հնարանոր է, որ այս բայերի ուղիղ խնդիր չընդունելը պայմանավորված է հարադրության մեջ այդ բայերի արդեն իսկ ուղիղ խնդիր ունենալով: Դա հաստատվում է նաև նրանով, որ գալի թվով հարադիր բայեր, հարադրության մեջ ուղիղ խնդիր չունենալով, նախադասության կառուցվածքում ուղիղ խնդիր են ընդունում, ինչպես՝ *գլխի գցել*, *գլխին քաշել*, *բաց թողնել*, *երես գցել*, *երես տալ*, *միտքը գցել*, *ետ տալ*, *բռնել տալ*, *մարդու տալ*, *բերան անել*, *բերան ասել*, *բերան բերել* և այլն: Մի շարք բայեր էլ, չնայած ներգործական սեռի իմաստ ունենալուն, ընդունում են բուն տրականով խնդիր, ինչպես՝ *ականջ դնել* (ինչի՞ն), *աչք դնել* (ինչի՞ն):

Անդհանրացնելով կրավորական ածանցման չենթարկվող (կամ որոնց կրավորականը անսովոր է) բայերի մասին ասվածը՝ ամփոփենք.

1. կրավորական ածանց չեն ստանում կազմությամբ թե՛ համադրական, թե՛ հարադրական բայեր:

2. կազմությամբ համադրական բայերի խումբն են կազմում

ա. պակասավոր մի քանի բայեր, որոնց կրավորականը ընդհանրապես գործածական չէ,

բ. հիմնականում չենթ սեռի իմաստ ունեցող, բայց իմաստափոխությամբ կամ խնդրառությամբ պայմանավորված ներգործական բայեր, որոնց կրավորական ածանցմանը խանգարում է հիմնական սեռային իմաստը,

գ. գործածական և ոչ գործածական բայեր, որոնք բացառապես կամ հիմնականում ներգործական սեռի են, բայց –Վ ածանց չեն ստանում կրավորական կառուցվածքի պատվ գործածության պատճառով:

Կազմությամբ հարադրական բայերի խումբն են կազմում.

ա. չենթ սեռի բայ-բաղադրիչ ունեցող ներգործական սեռի բայեր, որոնք կրավորական ածանցման հնարավորություն չունեն,

բ. ներգործական սեռի բայ-բաղադրիչ ունեցող ներգործական սեռի բայեր, որոնց մեծ մասը կրավորական ածանց չի ստանում դարձվածի կայունության պատճառով:

Резюме

В статье рассматриваются те глаголы действительного залога современного армянского языка, которые исключают образование посредством страдательного суффикса. В числе этих глаголов имеются простые и составные:

Գրականություն

1. Տե՛ս Մուրվալյան Ա., *Բայի սեռերը գրական նոր հայերենում*, Պատմա-բանասիրական հանդես, 1958, N3, էջ 44:
2. Տե՛ս Աբրահամյան Ա., *Բայը ժամանակակից հայերենում*, Երևան, 1962, էջ 525
3. Տե՛ս Ասատրյան Մ., *Ժամանակակից հայոց լեզվի ձևաբանական հարցեր*, հ գ, Երևան, 1977, էջ 182:
4. Տե՛ս Աբրահամյան Ա., Պառնասյան Ն., Օհանյան Հ., *Ժամանակակից հայոց լեզու*, Երևան, 1974, էջ 280:
5. Տե՛ս Ավետիսյան Յու., Զարբայան Հ., *Հայոց լեզու, Ձևաբանություն*, Երևան, 2008, էջ 77:
6. Տե՛ս Աբրահամյան Ա., նշվ. աշխ., էջ 718
7. Ա. Մուրվալյանը ներգործական սեռի բայերից ածանցված կրավորականների մի խումբ անվանում է՝ հնարավորության կամ լինելության կրավորական, քանի որ սրանք արտահայտում են գործողության հնարավորություն, ինչպես՝ *ուտվում է, խմվում է, խոսվում է*։ Նա նաև նշում է, որ հնարավորության կրավորական չենթ բայերից էլ է կազմվում: Տե՛ս Մուրվալյան Ա., նշվ. աշխ., էջ 51
8. Տե՛ս Մարգարյան Ալ. *Հայերենի հարադիր բայերը*, Երևան, 1966, էջ 176
9. Նույն տեղը, էջ 183
10. Պետք է նկատի ունենալ, որ հաճախ չեն նույնանում դարձվածի արժեք ունեցող հարադիր բայ ու բայական դարձված հասկացությունները: Հաշվի առնելով լեզվական այս երկու միավորների տարբերությունը՝ մենք քննելու ենք միայն այն բայական դարձվածները, որոնք ունեն հարադիր բայի (ոչ թե՛ բայական բառակապակցություն) կառուցվածք:
11. Տե՛ս Մարգարյան Ալ. Ե., նշվ. աշխ., էջ 173
12. Չատ երևույթին Ալ. Մարգարյանը դա է հաշվի առել՝ չենթ սեռի բայ-բաղադրիչ ունեցողները միայն այդ երկուսը համարելով ներգործական: Բայց չէ՞ որ լեզվաբանը առաջարկում է հարադիր բայի սեռը որոշել հարադիր ու այդ բայական բաղադրիչի միացությունը կազմող բայական բաղադրյալի իմաստով: Տե՛ս Մարգարյան Ալ., նշվ. աշխ., էջ 176:

ԱրՊՀ, հայոց լեզվի և նրա դասական դման մեթոդիկայի ամբիոն